# ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Սուրեն Մանուկյան,** պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն: 2012-2013 թթ. Ֆուլբրայթ հետազոտական ծրագրի կրթաթոշակառու: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության սոցիալ-հոգեբանական ասպեկտը և համեմատական ցեղասպանագիտություն:

**Գևորգ Վարդանյան,** պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի քարտուղար: Զբաղվում է օսմանահպատակ հույների պատմության և Հայոց ցեղասպանության ժխտման հարցերի ուսումնասիրությամբ: Ներկայումս պատրաստում է մենագրություն «Հայկական հարցը և Հայոց ցեղասպանության ժխտումը թուրքական քարոզչական հրատարակություններում, XIX դարի վերջին քառորդ – 1920-ական թվականներ» թեմայով: Շուրջ երկու տասնյակ գիտական հրապարակումների, այդ թվում նաև մեկ մենագրության հեղինակ է:

**Նարինե Մարգարյան,** պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Անդրկովկասի հայության ցեղասպանության և ուսումնասիրությունների բաժնի վարիչ: Զբաղվում է արաբական երկրներում Հայոց ցեղասպանության արձագանքի թեմայի ուսումնասիրությամբ: Մեկ մենագրության հեղինակ է:

**Ռոբերտ Թաթոյան,** պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Հայոց ցեղասպանության զոհերի փաստագրման և տվյալների հավաքագրման բաժնի վարիչ: Զբաղվում է արևմտահայության ժողովրդագրական հարցերի ուսումնասիրությամբ:

**Գոհար Խանումյան,** ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ֆոնդերի պատասխանատու: Ուսումնասիրության թեման է «Որբահավաք աշխատանքներն Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության տարիներին»:

**Էլինա Միրզոյան,** բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կրտսեր գիտաշխատող: Զբաղվում է թուրքահայ մամուլի էջերում Հայոց ցեղասպանության թեմայի ուսումնասիրմամբ: Ուսումնասիրությունների ոլորտները՝ արևմտահայ մամուլի էջերում հայ և թուրք ազգային ինքնությունների թեմայի քննություն, հայկական թեմատիկան թուրքական տպագիր մամուլում: Մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածի հեղինակ:

**Վալերի Թունյան,** պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Աշխատությունները վերաբերում են Ռուսաստանի քաղաքականությանը Հայաստանում, Հայկական հարցին, ինչպես նաև Հայ եկեղեցու քաղաքական պատմությանը:

**Շուշան Խաչատրյան,** ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի հեռակա ասպիրանտ, ՀՑԹԻ հուշագրությունների և վավերագրերի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտական աշխատող: Պատրաստում է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայոց ցեղասպանության հետազոտման կրոնագիտական խնդիրները» թեմայով: Ուսումնասիրություններ՝ Օսմանյան կայսրության կրոնական իրավիճակի, կրոնների բախման, ցեղասպանության աստվածաբանության, թեոդիցեայի, Հոլոքոստի փիլիսոփայության ոլորտներում:

**Ռեգինա Գալուստյան,** ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ՀՑԹԻ գրադարանի պատասխանատու: Ուսումնասիրության թեման է «Թուրքական ինքնության ձևավորումը և Հայոց ցեղասպանությունը»:

**Միհրան Մինասյան,** ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հուշագրությունների և վավերագրերի ուսումնասիրության բաժնի վարիչ: Յոթը մենագրության և բազմաթիվ հոդվածների հեղինակ է: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության երկրորդ փուլը (Սիրիայի տարածքում), հայ գրքի և ձեռագրերի պատմություն, հալեպահայ գաղթօջախի պատմություն և այլն:

**Նարեկ Պողոսյան,** ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունների մեջ է մտնում Հայոց ցեղասպանության հիմնախնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի գիտական ժառանգության մեջ: